ռապետը խոստացավ աջակցել նրանց: Այսօր մարզային իշխանությունները դպրոցին են տրամադրել մի շենք:

Մայր Աթոռ վերադառնալուց առաջ Նորին Սրբությունը այցելեց նաև Գյումրիի Անի թաղամասում կառուցվող Ս. Հակոբ եկեղեցի, որի հիմնարկեքը ևս կատարվել էր հովվապետական այցի ընթացքում, ձեռամբ Հայոց Հայրապետի:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ԴԱՎԻԹԱՇԵՆԻ ԿԱՄՐՋԻ ԲԱՑՄԱՆԸ

Նոյեմբերի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանի և ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հետ ներկա գտնվեց Երևանի Արաբկիր և Դավիթաշեն թաղամասերն իրար միացնող կամրջի բացմանը:

«Խորհրդանշական է Մեզ համար կամրջի կառուցումը այս դժվարին ժամանակներում, երբ առարկայական պատճառներով անջրպետված են մեր կյանքից բարօր ու անվրդով ապրելու զգացումները, երբ հացի ու օրավարձի խնդիրը դարձել է հիմնական ու ճնշող մտահոգություն»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ իր օրհնությունը տալով բոլոր նրանց, ովքեր մասնակից են եղել կամրջի կառուցման հայրենանվեր գործին:

Բացման արարողությունից հետո Նորին Սրբությունն ու հայոց պետական այրերը ոտքով անցան կամրջի ողջ երկարությունը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՆԻԿՈԼԱՅ ՊԱՏՐՈՒՇԵՎԻՆ

Նոյեմբերի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության պետ, գեներալ-լեյտենանտ Նիկոլայ Պատրուշևին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ

ԱԱ նախարար Կառլոս Պետրոսյանի և Հայաստանում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում կարևորվեց հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության ամրապնդումը, որին իրենց կարևոր նպաստն են բերում նաև Հայ և Ռուս Եկեղեցիները: Վերջինիս խոսուն վկայությունն է Ամենայն Հայոց Հայրապետի պարբերական հանդիպումները Ռուս Ուղղափառ Եկեղեցու գահակալ Ալեքսի Բ Պատրիարքի հետ և, մասնավորապես, Վեհափառ Հայրապետի այս տարի կատարած անդրանիկ այցը Ռուս Ուղղափառ Եկեղեցի, որ կաթողիկոսական ընտրությունից հետո առաջինն էր քույր Եկեղեցիներին տրված այցելությունների շարքում:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև վերջերս Ալեքսի Բ Պատրիարքի միջնորդությամբ Մոսկվայում կայացած հայ և ադրբեջանցի հոգևոր պետերի հանդիպման մասին, կարևորվեց հոգևոր առաջնորդների առաքելությունը խաղաղության հաստատման և հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման գործում:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Նոյեմբերի 13-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետն ընդունեց տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի զինվորական կցորդ Էնդրյու Քերին և Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարության ներկայացուցիչներին՝ դեսպան Թիմոթի Ջոնսի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց բանակում հոգևորականի դերի և զինված ուժերում հոգևոր ծառայության կազմակերպման կարևորության մասին: Վերջինիս առիթով հյուրերն իրենց աջակցությունն առաջարկեցին Հայ Եկեղեցուն՝ այդ ասպարեզում ունեցած իրենց երկարամյա փորձը փոխանցելու նպատակով: Նորին Սրբությունը, շնորհակալություն հայտնելով բարի կամեցողության համար, հյուրերին ներկայացրեց հայոց բանակում Մայր Աթոռի կողմից իրականացվող աշխատանքները, որ կատարվում է ՀՀ Պաշտպանության նախարարության համագործակցությամբ:

Նորին Սրբությունը նշեց, որ հայոց հոգևոր դարձին՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանին նվիրված հանդիսություններին անմասն չի մնա նաև հայկական բանակը, որտեղ ևս կկազմակերպվեն տոնական միջոցառումներ: Նման միջոցառումների ծրագիր կկազմվի նաև ազատագրման վայրերում գտնվող կալանավորների համար: